

ՉԱԳՄԱԳՃՅԱՆԸ ՈՐՊԵՍ ԲԱՌԱՐԱՆԱԳԻՐ

ԼՈՒԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Քիմիայի և կենսաբանության պրոֆեսոր Հարություն Չազմագճյանը ժամանակի զարգացած անձնավորություններից էր: Նա զբաղվել է նաև բառարանագրական աշխատանքով: Նրա գրչին է պատկանում «Անգլերեն—Հայերեն»¹ բառարանը, որը նույնատիպ բառարանների շարքում իրավամբ համարվում է լավագույնը: Այն լույս է տեսել 1922 թ. և պարունակում է 100000 բառահոգված, վերահրատարակվել է 1952 և 1960 թվականներին, Բեյրութում: Սույն բառարանը հեղինակի ութ տարվա տքնաշան աշխատանքի արդյունքն է: Նըշխով այն բոլոր դժվարությունները, որոնք կանգնած են եղել բառարանագիրների առջև, մանավանդ 1915 թ. և դրան հաջորդող տարիներին, հեղինակը դրում է. «Հայ հեղինակ մը շիրնար նյութական մեծ հաջողություն մը ակնկալել իր աշխատության համար, գինքը շարժող ուժը իր հավատքն է՝ դեպի իր ցեղին հառաջդիմության ոգին և յուր ձգտումը՝ անոր ժառանգելու իրավասան»²: Նախորդ անգլերեն-հայերեն բառարանները մեծ մասամբ առձեռն կամ գրպանի բառարաններ էին, գործնական բնույթ էին կրում և ունեին 10—25 հազար բառահոգված, ընդգրկում էին միայն այն բառերն ու արտահայտությունները, որոնք օգտագործվում էին առօրյա խոսակցական լեզվում: Դրանցում տրվում էին միայն բառերի հիմնական նշանակությունները, շատ աղքատ էին տերմինային նշումներով: Մինչդեռ Հ. Չազմագճյանի բառարանն ունի գիտական արժեք: Այն մի նոր, ծանրակշիռ խոսք է հայ-անգլերեն բառարանագրության ասպարեզում: Բառարանի անգլերեն բառացանկի համար որպես սկզբնաղբյուր ծառայել է Վերստերի բառարանը, որ, հեղինակի բառերով ասած, «անվիճելի հեղինակություն մըն է անգլիական աշխարհին մեջ»³:

Բառարանի սկզբում Հ. Չազմագճյանը տալիս է անգլերենի համառոտ քերականությունը՝ անկանոն բայերի, նախածանցների և վերջածանցների ցանկերով: Աշխատության վերջում տրված է հավելված՝ մի քանի կարևոր բաժիններով: Բառարանը կազմված է կիսարնային, կիսաայբբենական եղանակով: Գերիշխում են բնային եղանակով կազմված բառահոգվածները: Հեղինակը այս միջոցին է դիմել տեղ շահելու և ավելի շատ բառ ընդգրկելու նպատակով: Օրինակ. fume գլխաբառից առաջացած որոշ բառեր բերված են առանձին գլխաբառով, իսկ երբեմն էլ՝ նույն գլխաբառի տակ, որը դժվարացնում է բառարանից օգտվողի գործը: Օրինակ՝ fume — ծուխ, մուխ, գոլորշի: Զենճեր և այլն, որի տակ բերված է—less ածանցով՝ անծուխ, ապա fumer-ը և fumid-ը բերված են առանձին գլխաբառերով Fumid-ի տակ-ity, -ness պերջածանցներով՝ ծխություն, ապա fumiferous, fumigater (սակը-y վերջածանցով),

¹ Հ. Չազմագճյան, Ընդարձակ բառարան Անգլերեն-Հայերեն, Բոստոն, 1922:

² Նույն սեղում, էջ Ծ:

³ Նույն տեղում:

fumily, fuming (-ly վերջածանցով), fumish (տակը-ness վերջածանցով), իսկ fumose, fumosity, fummy բառերը բերված են առանձին գլխաբառերով*:

Բերելով անգլերեն գլխաբառը՝ Հ. Չազմագճյանը տալիս է դրա հայերեն տառադարձությունը, խոսքի մասային պատկանելությունը և հայերեն համարժեքը: Հոմանիշները զատվում են ստորակետերով, որոշ դեպքում էլ՝ միջակետերով, իսկ բազմիմաստությունը՝ վերջակետերով. track — թրէք, գ. հետք, ոտնահետք: Անվահետք: Ընթացք, ուղի, կածան: Մրցուղի*: Երկաթգիծ, երկաթուղի, weak — ուիք, ա. տկար. անզոր. թույլ, Կակուղ: Նոսր*:

Շեշտը դրվում է թե՛ անգլերեն գլխաբառի և թե՛ հայերեն տառադարձված ձևի վրա: Տառադարձված բառի վրա դրվում է միայն գլխավոր շեշտը, որպեսզի բառարանից օգտվողը կարողանա տարբերակել, թե որ վանկը պետք է արտասանվի ուժգին. declama'tion — տէքլեմէյշըն — ճառախոսություն, արտասանություն: Ճարտասանություն, land'owne'r — լէնտո՞ւնըր — կալվածատեր. հողատեր:

Բառարանում նշված են նաև անկանոն և փոխառյալ գոյականների հոգնակի ձևերը, անկանոն բայերն ու ածականները: Օրինակ՝ held անկ. hold-ի, silly, ա. (բաղդ. —-lier, գիրադ. —liest), domino (հգ. —s, —es):

Հեղինակը նույն գլխաբառով բերում է բառերի ուղղադասական տարբերակները, նշում է երկձև արտասանություն ունեցող բառերը: Օրինակ՝ whisky, whiskey /հուիս'քի/ — արմատողի, sear, sere /սի'ր/ — չոր, ալազուն և այլն, scone, scon /սքոն/ — բարակ քաքար մը. kinetic /քինէ'թիք, քալնէ'թիք/ — արժական, շարժուղոր, rendervous /րէն'տիվու, րան'տիվու/ — ժամադրություն, ժամադրավայր: Հ. Չազմագճյանը որպես գլխաբառ օգտագործել է նաև հապավումներ և բառերի կրճատ ձևեր: Օրինակ՝ SOS — անթեղ հեռագրով օգնություն կոչ, e'er — կրճատում ever-ի: Բ. Ն. Բարանը հարստացնում են անգլերեն գլխաբառի տակ տրվող հոմանիշային և հակահիշակին ձևերը: Միայնք հետազոտողին օգնում են հեշտություն մը գա՛ելու հնճ, ժեշտ հոմանիշներն ու հակահիշակները, new — գլխաբառի տակ բերված են /հոմ./՝ novel, recent, fresh, modern, /հակ./՝ old, ancient, antique, obsolete.

Բացի շեշտը շերտի բառերից, Հ. Չազմագճյանը բառարանում օգտագործել է նաև ժողովրդական, ռամկական և գավառական բառեր: Օրինակ՝ confab — խոսակցություն (ժող.), grass — դալարիք, գարուն (ժող.), dust — փող (ռամկ.), mug — երես, քերան (ռամկ.), force — ջրվեժ (գվռ.), hud — փեճեկ (գվռ.):

Ինչպես ամեն մի լեզվի, այնպես էլ անգլերենի և հայերենի զարգացման ընթացքում մեծիմաստ որոշ բառեր (նաև բազմիմաստ բառերի մեկ կամ մի քանի իմաստները) հնանում են և գործածությունից դուրս գալիս: Այս երևույթն արտացոլված է և Հ. Չազմագճյանի բառարանում, որտեղ հայերեն բառից առաջ դրված աստղանիշը նշանակում է, որ անգլերեն բառի այդ մասնավոր

* Պետք է նշել, որ ավելի նպատակահարմար է բառարանների այբբենական դասավորությունը: Դեռևս Մխիթար Արքան, քննադատության ենթարկելով բառարան կազմելու բնային եղանակը, գրել է, որ ինքը առաջնորդվել է խիստ այբբենական կարգով և ոչ թե շատերի նման՝ ճնախ դնել զբառս՝ Սուրբ և ապա ի ներքոյ նորա մեկնել զբառս՝ սրբափայլ, սրբաբեհեզ և այլն» (Մ. Ս. Բարանյան, Հին հայկազյան բառարան, Վենետիկ, 1749, էջ 16):

4 Բառավերջում հայերեն բառերի վրա դրված աստղանիշը նոր բառ կամ տերմին է ցույց տալիս, որը ստեղծել է Հ. Չազմագճյանը:

իմաստը անգործածական է, իսկ անգլերեն բառից առաջ դրված փաստադրույթը ցույց է տալիս, որ բառը տվյալ փուլում հնացած է. *groundly հաստատապես, խորապես, լիովին, *moky — աղոտ, մութ, մշուշոտ, luculent — պայծառ, հստակ, թափանցիկ: *Շքեղ, likeness — նմանություն: Պատկեր: Երևույթ: *Բաղդատություն: *Առակ: Երբեմն բառի հնացած ձևը հեղինակը հղում է կենսունակ, օգտագործվող ձևին. *eyr (գ.) air — օդ: Բառարանում նշվում են նաև քերականական հնացած ձևերը: Օրինակ՝ *bee անց. բ. be-ի, *ladde անկ. — lead-ի, *laft անց. բ. leave-ի, *left անց. leave-ի:

Բառարանում կան բաղմամբիվ փոխառություններ ոչ միայն եվրոպական հին և նորագույն լեզուներից, այլև հնդկերենից, արաբերենից, ուսեերենից, Օրինակ՝ grelot, loir՝ ֆրանսերենից, armada, fonda՝ իսպաներենից, bund՝ aam՝ գերմաներենից, fecket, gly, շոտլանդերենից, busto, donna՝ իտալիե-նից, corah, gharry՝ հնդկերենից, rubai, sheik՝ արաբերենից, boyar, zems-tvo՝ ռուսերենից: Ռուսերենից կան նաև նորագույն փոխառություններ: Օրինակ՝ leninite, soviet: Բառարանում հասդիպում են կայուն կապակցություններ, որոնք ծագումով փոխառված են: Օրինակ՝ stabat mater — Կալըն Մայրն [առ խաչին/լափին հոգևոր երգը մը նույն սկզբնավորությունը, K]ockken mo-ed ding — խոհանոցի սպասուհի [դանիական]:

2. Չագմագճյանի աշխատության համար հատկանշական է բաղմամբիվ տերմինների առկայությունը, որը բառարանի արժանիքներից մեկն է: XX դ. գիտության և տեխնիկայի ուժեղ պերելքը իր կնիքն էր դնում յուրաքանչյուր լեզ-վի բառային կազմի վրա: Լինելով քիմիայի և կենսաբանության պրոֆեսոր, Հ. Չագմագճյանը իր բառարանում զետեղել է քիմիական և կենսաբանական շատ տերմիններ, քիմիական տերմիններից մեծ մասի մոտ նշելով նաև դրանց բա-նաձևերը, ինչպես՝ vinil — գինիլ* (տրգ.) արմատական մը CH_2CH , xenyl — քսենիլ, արիլ* [տրգ.] արմատական մը $\text{C}_6\text{H}_5\text{C}_6\text{H}_4$, xylidine-փալտիդին*, տրգ. $(\text{CH}_3)_2\text{C}_6\text{H}_3\text{NH}_2$, microgam ete — մանրասեռակ* [կս.], coccobacte-rium — մանրէհ* [կս.] blastide — նախակորիզ* [կս.]:

Բացի քիմիական և կենսաբանական տերմիններից, հեղինակը բառարանում զետեղել է բժշկական, երաժշտական, փիլիսոփայական, կենդանաբանական, հանքաբանական, թռչնաբանական, ձկնաբանական և այլ բնագավառների բաղ-մամբիվ տերմիններ: Դրանցից շատերը նորություն էին, և անհասկանալի չը-թողնելու համար հեղինակը փակագծերում տվել է դրանց համապատասխան բացատրությունը, branchiome — խոկաթե*, ձկ. (խոհիկները կծառայեն նաև շարժումին), cyponautes — կորալողակ*, կ. (երկպատյան լողակենդան), galax — կաթնափայլիկ*, բս. (կլոր և փայլուն տերևներով և ճերմակ ծա-ղիկներով): Հեղինակի ստեղծած տերմինների մեջ կան այնպիսիները, որոնք մինչ այդ ունեցել են իրենց անվանումը, իսկ Չագմագճյանը ստեղծել է նոր տերմին, ինչպես՝ bulimia — ցլաքաղց*, շնաքաղց (բժ.), galacto — կաթ-նաբշտիկ*, կաթնուռեցք (բժ.), fire — crest — արքայիկ, հրաբուրկ* (թռչ.), ovoilo — ձվազարդ, ձվադրվագ* (ձ.): Հաճախ անգլերեն տերմին-գլխաբառի համար հայերեն հոմանիշներից երկուսը կամ նույնիսկ երեքը հեղինակի կեր-տածներից են, օրինակ՝ indol — հնդկոլ, լեղակոլ, kytomiton — կորիզա-հյուսակ*, կորիզացանց*, (կս.), vitamine — կենսամին*, կենսօշին* (արմը-տաց մեջ սնունդի անհրաժեշտ նյութ մը (բնիս. տրգ.):

Հեղինակը որպես գլխաբառ օգտագործել է նաև բաղադրյալ տերմին-

ներ: Օրինակ՝ wave meter — ալիչափ [էլկ.], lignum rhodium — վարդափայտ [բս.], mansard roof մանսարգյան երգիկ [ճ.], կրկնաշեղ՝ չորս կողմեն, margate fish — ճենճոր [ձկ.], խանջաձուկ, Շատ տերմիններ կան և գլխաբառերի տակ.

elephant — փիղ -ի տակ ունենք.

—apple — փղախնձոր (նարնջազգի ծառ մը)

—bed — փղոսկրախավ, երկբ. (Պրայթընի մեջ, Անգլիա)

—beetle — փղալվիճ (որևէ խոշոր բզեզ)

—bird — փղաթռուն (բրժ.)

—creeper — հսկա պատուտակ (բս.)

—fish — փղածուկ

—grass — փղախոտ (որուն բեղմնակեն հնդիկները հաց կշինեն)

—mouse — փղամուկ, մկնաքիս

—seal — ծովափիղ

—shark — հսկա շնածուկ

—shrew — փղամուկ

—'s ear — փղականջ* (բս.)

—'s foot — փղաթաթ* (բս.)

—thorn — փղափուշ, հնդիկ ակակիա:

2. Չագմագճյանի բառարանը հարուստ է դիցաբանական, պատմա-կան օտարաբանություններով և աշխարհագրական տեղանուններով, որոնց մոտ բերված են բազմաթիվ կապակցություններ: Այդ անունների մոտ, փակագծերում տրված են լրացուցիչ բացատրություններ. օրինակ՝ Themis — Թեմիս, դիցուհի արդարության (դուստր Երեւակի և կին Արամազդի), Damascus — Դամասկոս — իլադ — դամասկոսյան շեղբ, սուր մը, — iron or twist (դամասկոսյան ձուլ, — steel — դամասկոսյան պողպատ, Hippocrates — Հիպոկրատես (հույն բժիշկ 460 Ն. Ք.):

Անգլերեն համանունների հարցում ևս 2. Չագմագճյանը հանդես է բերել գիտական մոտեցում: Հեղինակը տարբերակել է անգլերեն համանունների մի քանի խմբեր: Նախ առանձնացրել է այն համանունները, որոնցից մեկը կամ էլ երկուսը օտար փոխառություններ են. օրինակ՝

beta — պիթէ (գ), երկրորդ գիր հունարեն այբբենարանի գիտական դասակարգության մեջ: Պեթա աստղ, երկրորդ կարգի աստղ

be'a — (գ.) բազուկ, բանջար

beg — պէկ կամ պէյ (գ.) պեյ (թր. տիտղոս)

beg — պէկ (բ.ն.) խնդրել, աղաչել: Մուրալ. Համարել (բ. չ.) մուրալ:

2. Չագմագճյանի բառարանում հանդիպում ենք բառային համանունությունների, որտեղ մի բառի յուրաքանչյուր ձև համանուն է տվյալ զույգի մյուս բառի որևէ ձևի հետ, և այսպիսով, քերականորեն նույնն է իր համանունության հետ. օրինակ՝

case — քէյս (գ.) սնդուկ: Տառախորշ, ուրճ (տպ.): Շրջանակ և այլն

case — քէյս (գ.) Պարագա: Պատահմունք: Դեպք և այլն

card — քարտ (գ.): հաշվաքարտ: Քարտ: Այցաքարտ և այլն

card — քարտ (գ.) հերհեր, գզոց (բուրդի): Կիզ (գզված բուրդ):

Բառարանում որոշ թիվ են կազմում պարզ բառաքերականական համա-
նունները, որտեղ ունենք տարբեր քերականական ձևեր, որոնք պատկանում են
նույն համակարգի ձևերին. օրինակ՝

hore — (բ. ն.) ծակել: Բանալ (ճամփան)

bore — անկ. bear-ի

kilt — անց. kill-ի

kilt — (բ. ն.) թխմել, լեցնել (հագուստի զանազան մասերը): Հանգրիճել:

Բացի պարզ բառաքերականական համանուններից բառարանում կան նաև
բարդ բառաքերականական համանուններ, որտեղ քերականական տարբեր ձե-
վերն ունեն տարբեր խոսքի մասային պատկանելություն:

light (լայթ) գ. լույս: Յորեկ: Ճրագ, նշույլ, շահ: Լուսամուտ և այլն

light — (ա.) թեթև: Դուրասրահ: Թեթևըթաց, ճապուկ, արագ

bitter — պիթթեր (գ.) դարձվածք (մալուխին հաստարանին շուրջ (նվ.)

bitter — (ա.) դառն, կծու, ցավազին, կծկծալի:

Երբեմն անգլերեն համանուններից մեկը կամ որոշ դեպքերում երկուսն
էլ հնացած են: Օրինակ՝ *broke — պրօք՝ բ. չ./ միջնորդել /առևտրի կամ ախ-
րո մեջ/, broke — անց. break — ի, *brede or *breede — պրիտ /գ./, breadth,
brede — /գ./ հյուսված: Լեղինակը որոշ համանուններ ներկայացրել է որպես
քաղմիմաստություն՝ բերելով նույն գլխաբառով: Օրինակ՝ march, seal, ball,
band, temple քառերը պետք է ներկայացվեն երկու կամ երեք ինչպես
temple — /ր/ գլխաբառերով, որպես համանունություններ:

Բառարանի առաջաբանում Հ. Զագմագճյանը գրել է. «Ոճեր հաճախ տըր-
ված են ուր որ կարելի եղած չէ բառի մը կիրարկված ոճերը տալ, նույն բառի
առումներեն կարելի է ճշգրիտ քարգմանություն տալ այն ոճերին, որոնք գըր-
քերուն մեջ կպատահեն»: Նվ. գլխաբառերի տակ բերել է մեծ քանակությամբ
դարձվածաբանական միավորներ՝ «ոճեր»: Սակայն տեղի խնայողության պատ-
ճառով բառարանից դուրս են մնացել որոշ կարևոր դարձվածքներ: Բառարա-
նում կան դարձվածաբանական սերտաճումներ, որոնք առանց ստուգաբանա-
կան վերլուծության դժվար կլինի ըմբռնել: Այսպես, to bury the hatchet-ը
քարգմանված է՝ խաղաղություն հաստատել (Ամ. հնդկների սովորությունը):
Այս դարձվածքը բառացիորեն նշանակում է՝ թաղել ռազմական տապարը, որը
ծագել է ամերիկյան հնդկացիների այն սովորությունից, որ, տարբեր ցեղերի
հետ խաղաղություն հաստատելիս, սրանք իրենց ռազմական տապարը թա-
ղում էին հողի մեջ:

Բառարանում քիչ չեն և դարձվածաբանական միասնությունները, որոնք
ունեն նաև ուղղակի իմաստ: Օրինակ՝ to play first or second fiddle, որ
երաժշտության մեջ օգտագործվում է ուղիղ իմաստով՝ նվագել (լինել) առաջին
կամ երկրորդ ջութակ նվագախմբի մեջ: Իբրև դարձվածաբանական միասնու-
թյուն նշանակում է՝ դեկավար կամ երկրորդական դիրք գրավել (դեր կատարել):

Մեծ թիվ են կազմում դարձվածաբանական կապակցությունները, որոնց
մեջ մտնում են՝

ա/ բալական կապակցություններ՝ help — ի տակ, to help forward — առա-

ջացման օգնել, to help off — ժամանակ անցնել: Հեռացնելու օգնել to help on — օգնություն ատաղացնել, to help out — դժվարություն էն աղատել: Լմնցնելու օգնել և այլն,

բ/ գոյականական կապակցություններ՝ dead dog — անարժեք բան, cock of the walk — վայրկյանի հերոս,

գ/ ածականական կապակցություններ՝ light of foot, թեթևոտն, սրընթաց free and easy — պարզ և անկաշկանդ,

դ/ մակբայական կապակցություններ՝ h. a. l. e and corner — գաղտագողի, from head to foot — ոտքից մինչև գլուխ:

Բառարանում բառերի բազմիմաստության հարցը հիմնականում հաջող է լուծված: Նախ տրվում են գլխաբառի ուղղակի, հիմնական գործածական իմաստները, ապա փոխաբերական և երկրորդական իմաստները, ենդ կիրառություններն ու տարբեր առումները: Օրինակ՝ horn — եղջյուր, կոտոր: Նղջերափող: Նղջերասկահ: Մաղթեղջուր (սիզային բս.): Վառողաման: Նղջուրի նմանող որևէ իր: Դանակի եղջերաձև ժայռ: Մահիկի ծայրերը: Նղջերանյութ, ղորություն, փառք (խորհրդանշան Ս. Գ-ի մեջ): Դժվար չէ նկատել որ horn գլխաբառի հիմնական նշանակությունն է եղջյուր, կոտոր, որը հասկացվում է և համատեքստից դուրս, իսկ երկրորդական նշանակություններն են բոլոր մնացածները: Օրինակ՝ farm — ագարակ: Հողակալություն: Հարկաթիմ* (գավառական հարկահավաքական բաժանում): Տուրք (որոշ նյութերի վրա): *Հողավարձը: Հիմնական նշանակությունն է ագարակը: Լեզվի զարգացման ընթացքում ձևեր է բերել նոր իմաստ, իսկ դրա որոշ իմաստներ հնացել են: Այսպես, հեղինակը կերտել է հարկաթիմ նոր բառը, մյուս կողմից farm բառի հողավարձ իմաստը հնացել է, cross — խաչ: Խաչափայտ: Խաչանշան: Դրամ մը (խաչի պատկերով): Տառապանք: Խաչանիշ: Խաչագիծ (ստորագրություն և այլն): Տարազուգություն (կենդանաց): Զևա, ձևոց (երկշ.): Խաչաձև խողովակ: Խաչաձևություն, խաչաձծություն (էլկ.), երբ երկու հաղորդիչներ իրար դպին դիպվածով: Ինչպես երևում է, cross գլխաբառի հիմնական նշանակությունն է խաչ, իսկ մյուս իմաստները առաջացել են գլխավորից: Հեղինակը տվել է նաև տերմինային նշումը՝ զևա, ձևոց (երկշ.), խաչաձևություն, խաչաձծություն (էլկ.): Որպես ածական, հեղինակն օգտագործել է իր կողմից ստեղծած նոր բառ՝ հակափոխ: Խաչաձև: Խոտորնակ: Ներհակ: Դեզ, խոժոռ: Հակափոխ*:

Հայերեն հոմանիշների տարբերակումը բառարանում կարելի է հաջող համարել, սակայն որոշ դեպքերում հոմանիշների շարքում հանդիպում ենք հնացած, բարբառային կամ էլ որպես հոմանիշ դիտված բառերի շարքում՝ ոչ հոմանիշ բառերի: Ստ. Մալխասյանցը գրում է, որ Շշատ բառարանագիրներ կարծում են, թե օգուտ են տալիս թարգմանիչներին, ընտրության ընդարձակ ասպարեզ բացելով նրանց առջև, կամ էլ թե հայերենի առատությունն են ցույց տալիս: Բայց սա սխալ և վնասակար սկզբունք է, քանի որ ընթերցողը չի կարող որոշել և ճիշտ պատկերացում կազմել բառի մասին և կշիռների այն ուրիշ հոմանիշ բառերի հետք⁶: Օրինակ՝ jar — կահույր, ճառա, բղող: Այստեղ կահույր և ճառա հոմանիշները հնացած են, mail — զրահ, վերտ, թոռոպ:

թոռապ, ուր վերտը հնացած բառ է, իսկ թոռուպը և թոռապը հազվադեպ կիրառություն ունեն, row-ի մոտ գրված՝ աղմկոտ կոխվ, կադ, վեճ, որտեղ կազը հնացած բառ է, hay — խար, շոր խոտ, ծոր, ուր ծորը բարբառային կիրառություն ունի, pyramid բուրգ, հուրան, հորան. այստեղ հուրանը և հորանը հնացած են: Gentle-ի մոտ գրված՝ ազնիվ, ազնվածին, բարեկիրթ: Մեղմ, հեզ, փափուկ, գողտիկ, քաղցր, ուր վերջին երկու բառերը դիտված են որպես հոմանիշներ: Սակայն այստեղ հոմանիշներ են ազնիվ, ազնվածին, բարեկիրթ, այնուհետև՝ մեղմ, հեզ, փափուկ բառերը, իսկ գողտիկ-ը և քաղցր-ը բազմիմաստություններ են, petty շնչին, փուշ, փանաքի, գժուձ, ցած: Պզտիկ, ստորադաս, ուր ստորակետերով բաժանված բառերից ոչ բոլորն են հոմանիշ, post — կայարան, իշկան, զորակայան բառերը դիտված են որպես հոմանիշ, սակայն բազմիմաստություններ են:

Համեմատենք մի քանի գլխաբառ 2. Չագմագճյանի և Մ. Գույումջյանի⁷ բառարաններից: Մ. Գույումջյանի բառարանում discharge-ի մոտ գրված է՝ բեռնաթափություն, բեռնահանում, դատարկում, պարպում, արձակում, հոսում, ազատում, փրկանք, անդորրագիր, գործադրություն, թարախում, շարավում: Վճարում: Բ. ն. և բ. չ. արձակել, բեռը հանել, պարպել, կրակել, թեթևացրել, պարտքը վճարել: Թափել, հոսել, բեռը թափել: Խնչպես նկատում ենք, շատ բազմիմաստների իրարից բաժանվում են ստորակետերով, որը հատուկ է հոմանիշությունների: 2. Չագմագճյանի մոտ discharge գլխաբառը ավելի հստակ է տարբերակված: Բերված են ավելի շատ իմաստներ, նշված են հնացած իմաստները և նորակերտ բառերը, որ ստեղծել է հեղինակը: Փակագծերի մեջ տրված են լրացուցիչ մեկնություններ. discharge — բ. ն. Արձակել: Բեռնատեղ: Պարպել: Կրակել: Թեթևացնել, ազատել (պարտք է են): Հանել (պաշտոն են): Ծոտ առնել, շնչել: Կատարել, գործադրել (պաշտոնը): Վճարել: Արգելել: Գույնը բանալ, արձակել: Բ. չ. Արձակիլ, բեռնաթափ ըլլալ: Պարպիլ: (գ.) Բեռնաթափություն, դատարկում, պարպում: Արձակում: Ազատում: Հարված, կրակ: Կատարում, գործադրություն: Վճարում: Վտարում: Փրկանք: Արձակողական: Անդորրագիր: Ցայտում: Հոսարձակություն (էլկ.) վերջինս նորակերտ բառ է՝ տեղմինային նշումով:

Drive բառի մոտ Մ. Գույումջյանը գրել է. շրջագայություն. Կառուղի, կառքով պտույտ: Կառագնացություն: Մուղ, մխում, քշում: Ուժգնություն: Բ. ն. Քշել, վարել: Մխել, գամել: Փութացնել, ստիպել: Որսալ, առաջնորդել, տանիլ: Բ. չ. Կառքը վարել, քշել: Բեռնատեղ, քշվիլ, մխվիլ, ձգտիլ, որսալ, մտադրել, գործել: Այդ նույն գլխաբառի բացատրությունը 2. Չագմագճյանի մոտ հետևյալ պատկերն ունի՝ drive-բ. ն. քշել, վարել: Մղել, ստիպել: Մխել: Հորիզոնական ուղղությամբ փորել (հանքը): Անցնել (ժամանակ): Բ. չ. Քշվիլ, մխվիլ, մղվիլ: Կառք քշել: Ձգտիլ: Վարձքի համար գրավել (գ.): Կառքով պտույտ, կառագնացություն: Կառուղի: Մուղ, մխում: Քշում (գնդակի են):* Ծնշատիպ* (կաղապար տառի): Քշված, քշվելիք նյութեր (ատաղձ են. գետի վրա) ժող.: Ի տարբերություն Մ. Գույումջյանի, 2. Չագմագճյանը առանձնացրել է գլխաբառի հին իմաստները՝ անցնել (ժամանակ), վարձքի համար գրավել: Ստեղծել է նոր բառ՝ Ծնշատիպ (կաղապար տառի), տվել է գլխաբառի ժողովրդական նշումը՝ քշվելիք նյութեր (ատաղձ են. գետի վրա) ժող.: Փա-

7 Մ. Գույումջյան, Հնդարձակ բառարան անգլիերեն-հայերեն, Կահիրե, 1961: Արաբեր 8-4

կագծում բերել է լրացուցիչ բացատրություններ՝ բառի իմաստը կոնկրետացնելու նպատակով:

Մ. Գույումջյանը *brace* գլխաբառի մոտ գրել է՝ կապ, նեցուկ, գոտի, լար. տողակապ, պահանգ, զենքի փոկ, առագաստակալ, բազկազրահ, հանքահորի բերան: Բ. Ն. ամրացնել, զորացնել, պրկել, սեղմել: Այս դեպքում ևս Հ. Չազմազյանը, ի տարբերություն Մ. Գույումջյանի, տարբերակել է այս բազմիմաստ բառի տարբեր իմաստները, իրարից զատելով վերջակետերով: Պահանգ բառի մոտ բերում է տերմինային նշումը՝ նավային: Տվել է նաև *brace*-ի հնացած իմաստը՝ ասպազեն: Ստեղծել է նոր բառ՝ ձգալար:

Բառարանի վերջում տեղագրված հավելվածը բաղկացած է մի քանի կարևոր բաժիններից՝ ա) Անգլերենի մեջ գործածվող կրճատումները, բ) 300 անգլերեն բառերի նոր ուղղագրությունը՝ հաստատված պրեզիդենտ Վ. Ռուզվելտի կողմից, գ) Ուղղագրական 20 կանոնները, դ) Դիցարանական անուններ, ե) Աշխարհագրական բառարան, զ) Կարևոր անձերի կենսագրություններ, է) Տղամարդկանց անուններ, ը) Կանանց անուններ, թ) Հայոց պատմության կարևոր կետերը, ժ) Աշխարհի պատմության կարևոր կետերը, ի) 5 մեծ տերությունների նավատորմի ղեկները, լ) 5000-ից ավելի բնակչություն ունեցող ամերիկյան քաղաքները, խ) Աշխարհի 200000 և ավելի բնակչություն ունեցող քաղաքները և այլն: Առանձնապես կարևորություն է ներկայացնում «Անգլերենի մեջ գործածված օտար բառերը» բաժինը՝ 600 բառահոգվածով, որտեղ կան հունարեն, լատիներեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն բառեր և արտահայտություններ, որոնք գործածական են անգլերենում՝ *fiat lux* (լատիներեն) — եղիցի լույս, *eureka* (հունարեն — գտա՜), *ewigkeit* (գերմաներեն) — հավիտենականություն, *a giorno* (իտալերեն) — ցերեկանման, պայծառ, *au reservoir* (ֆրանսերեն) — ցտեսություն:

Մ. Գույումջյանը հետագայում աշխատելով իր անգլերեն-հայերեն և հայերեն անգլերեն բառարանների վրա, մեծապես օգտվել է Հ. Չազմազյանի բառարանից, հատկապես վերջնելով նրա նորակերտ բառերն ու տերմինները, ինչպես՝ *paraselene* — հարալուսին, *paperagrap* — պապերագիր, *overlaying* — մակածեփ, *coachwhlp* — մտրակահավ, *cellulitis* — բջջատապ, *ceratosaurus* — եղջերամողե, *louchettes* — շլակնոց, *galeopithecus* — թռակապիկ, *gallature* — ձվաթել և այլն:

Դրվատելով Հ. Չազմազյանի բառարանը՝ Հ. Տաշյանը գրում է, որ Հ. Չազմազյանի «Անգլերեն-հայերեն» բառարանը ընդարձակ և ընտիր գործ է: Այն մի ընտիր աշխատասիրություն է և առաջինն՝ իր ընդարձակությամբ անգլերեն-հայերեն բառարանների շարքում: Ունենալով շատ ճոխ պարունակություն՝ իբրև նորագույն աշխատություն, «ունի գիտությանց ամեն ճյուղերին նորագույն բառեր, որոնք չկան բոլոր նախընթացներուն մեջ: Բնականաբար Հ. Չազմազյանը կըրնար օգտվիլ նախընթացներին, բայց օգտված է շրջահայեցողությամբ, ընտրող ըլլալով լավագույնին, ոչ թե բառեր խճողելով՝ այլ՝ ընտրելով սակավը, բայց լավագույն երևցածը»⁸:

Հ. Չազմազյանի բառարանը իր բազմաթիվ արժանիքների շնորհիվ հրատարակման հենց առաջին օրից ջերմ ընդունելություն գտավ, օգնել և այժմ էլ մեծ չափով օժանդակում է անգլերեն լեզուն յուրացնելու գործում:

⁸ Հ. Տաշյան, Բառախոսական դիտողություններ հայերեն գրական լեզվի մասին (ձեռագրես ամսօրյա, 1925, էջ 172):

ՀԱՅԱՌԱՅՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ա. — աժադան	էլկ. — էլիկարական
անկ. — անկառար	թռչ. — թռչնարանական
անց. — անցյալ	թր. — թուրքերեն
անց. դ. — անցյալ բնորոշիչական (բնորոշիչական անցյալ)	ժող. — ժողովրդական
բազդ. — բազդատական (համեմատական)	կ. — կենդանարանական
բմ. — բժշկական	կս. — կենտարանական
բ. ն. — բայ ներգործական	հակ. — հականիշ
բնիւ. — բնախոտական (ֆիզիոլոգիական)	հզ. — հոգեակի
բ. շ. — բայ շնորհ	հոմ. — հոմանիշ
բս. — բառարանական	ձկ. — ձկնարանական
բրժ. — բրաժայական	ճ. — ճադտարապետական
գ. — գոյական	նվ. — նախադարական
գերադ. — գերադրական	ն. ք. — նախքան քրիստոսը
գղւ. — գաղառական	սամկ. — սամկական
երկր. — երկրարանական	Ս. Գ. — Սուրբ Գրք
երկշ. — երկրաշափական	տպ. — տպագրական
	տրգ. — տարրագիտական (թիմիական)

ЧАКМАКЧЯН КАК ЛЕКСИКОГРАФ

ЛЧИЛИК ВАРТАНЯН

Р е з ю м е

Англо-армянский словарь Чакмакчяна по праву считается одним из лучших словарей среди себе подобных. Он впервые был издан в Бостоне в 1922 г., а затем дважды переиздан в Бейруте в 1952 и 1960 гг.

Анализ словаря показывает, что он составлен на научных принципах, принятых в лексикографии. Для составления английской части словаря автор использовал словарь Вебстера. В армянской части словаря автор проделал огромную работу в деле создания армянских эквивалентов английских слов, главным образом, терминов, относящихся к различным областям науки: химии, биологии, медицины, архитектуры и др. К числу достоинств словаря относится разграничение между полисемией, синонимией и омонимией, что в сравнении с другими англо-армянскими словарями выгодно его отличает.